ՁԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ*

Հ. Գ. ՄԱՐԴԱՐՅԱՆ

Զաքարյանների ծագման երկրորդ՝ Բագրատունիներից սերելու վարկածն արտացոլված է առավել մեծ թվով սկզբնաղբյուրներում, սակայն եռանդունկերպով քարոզվել է համեմատաբար կարճ ժամանակահատվածում ու արձագանք չի գտել հայ և վրաց միջնադարյան պատմագրության մեջ։

Այս տեսությունը քննելիս նախ անհրաժեշտ է հստակեցնել, թե Զաքարյաններից ո՞վքեր են Բագրատունի հորջորջվել և ապա պարզել՝ Բագրատունիների ո՞ր տոհմաճյուղի հետ են ազգակցություն փնտրել Հայաստանի նորահայտ տիրակալները։

Ավանդաբար համարվում է, որ իրենց Բագրատունի են անվանել Իվանե աթաբեկը և նրա քույր Վանենին (Նանան)[1]։ Ուստի վերստին անդրադառնանք սկզբնաղբյուրներին և ճշտենք, թե Զտքարյաններից ո՞վ ե ե՞րբ է հիշատակել իր ազգակցությունը նշանավոր արքայատոհմի հետ։ Ժամանակագրական առումով թերևս ամենավաղ ու առավել հայտնի հիշատակությունը պատկանում է Վանենի իշխանուհուն[2]։ Ուսումնասիրողներից Աս. Շահնազարյանցի կարծիքով, «Նանան իրեն համարում էր Բագրատունյաց ցեղից, երևի այն մտքով, որ ինքն ամուսնացած էր Բագրատունի թագավոր Աբասի հետ»[3]։ Բայց ամուսնու տոհմակից դիտվելու համար մի՞թե բավական էր նրա հետ ամուսնացած լինելը։ Կյուրիկյանների հետ խնամիական կապերը անսովոր չէին XII դարի հայկական իշխանական տների համար, բայց այդ տոհմերից որևէ մեկը իրեն չի սկսել Կյուրիկյան կամ Բագրատունի անվանել։ Եթե Վանենիի և Աբասի երկու տարի տևած ամուսնությունը ընդունելի փաստարկ չէր կարող դիտվել՝ Նանային Բագրատունիների տոհմին դասելու համար, ապա առավել ևս Կյուրիկյանների հետ միակ խնամիական

---

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1992, № 2—3։

1 Տե՛ս Աս. Շահնազարյանց. Զաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Զորագետ և նախորդները.—«Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 69—70, Շ. Մեսխիա. Ներքաղաքական կացությունը և պաշտոնական կառուցվածքը XII դարի Վրաստանում. Թբիլիսի, 1979, էջ 223—224 (վրացերեն)։

2 Կ. Ղաֆադարյան. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1957, էջ 185—186։ Պետք է խոստովանել, որ արձանագրությունը մասամբ վնասված է և դժվար է անվերապահորեն եզրակացնել, թե «[ա]զգին Բագրատունեաց» բառերը վերաբերում են հենց Վանենիին։

3 Աս. Շահնազարյանց. նշվ. աշխ., էջ 70։ Ավելի վաղ նույն տեսակետն է հայտնել Մ. Բրոսեն (տե՛ս M. Brosset. Additions et e'claircissements a l'Histoire de la Géorgie. S.-Pet., 1851, p. 270.

աղերսը[4] չէր կարող ելակետ ծառայել նաև մյուս Զաքարյաններին Բագրատունի հռչակելու համար։

Ամենաուշագրավ փաստն, այնուամենայնիվ, հետևյալն է. Վանենիից ու Իվաննից դաս թագավորական ծագում է վերագրվել նաև նրանց քրոջը՝ Նրջիսին ու, որ ամենակարևորն է, Զաքարիա ամիրսպասալարին։

Դիմենք համապատասխան փաստերին։

Հաղարծնի սուրբ Գրիգոր եկեղեցու դավթի նշանավոր արձանագրությունը Զաքարյանների և Բագրատունիների աղգակցությունը շեշտող ամենակարևոր վավերագիրն է։ Վիմագրի առաջին մասը՝ «Այս մեր գիր յիշատակի է եւ արձան մշտընջենաւոր որդեաց մեծին Սարգսի, յազգէ Բագրատունեան՝ Իւանէի եւ Զաքարէի, յորժամ նախախնամութիւն Աստուծոյ էհաս յարարածս եւ եռ... տիրել սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց, եռ ի ձեռս մեր յառաջ զտնտոիկ դղեակն Անբերդ»[6] իրականում գրված է Զաքարիայի մահից քիչ անց, Իվանեի կողմից[7]։ Այս իրողությունը, սակայն, դեռևս չի նշանակում, թե արձանագրությունում հավաստված տեսակետը պատկանում է միայն Իվանեին։ Հաղարծնի արձանագրության մեջբերված հատվածը համադրելի է Հաղբատի կարևոր վիմագրերից մեկին, որը գրվել է «յամս աւծելոյ Աստուծոյ թագաւորաց թագաւորին Գէորգէ, որդոյ մեծ թագաւորին Թամարին, յորոյ ժամանակս եռ Աստուած ի ձեռս Բ հարազատածս՝ Զաքարէի եւ Իւանէի զսեփական դղեակն մեր զԱնբերդ, զշինեալն ի նախնեաց մերոց եւ զայլ բազում ամրոցս»[8]։ Դժվար չէ տեսնել, որ ընդգծված հատվածները բանաձևային բնույթ ունեն և Բագրատունի-Զաքարյան տոհմակցության տեսությունը առաջ է քաշվել երկու եղբայրների կողմից։ Ավելին, հիմքեր կան կարծելու, որ առաջին հերթին Բագրատունի է հռչակվել Զաքարեն և միայն Շահնշահի մանկահասակության ժամանակահատվածում է առանձին շեշտվել Իվանեի թագավորական ծագումը։ Այսպես, Գեղարդի գլխավոր եկեղեցու 1215 թ. արձանագրությունում «թագաւորազն», այսինքն՝ Բագրատունի է կոչվում միայն Զաքարե ամիրսպասալարը։ «Ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարէի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդոց նոցին Շահանշահի եւ Աւագին»—ասվում է վիմագրում[9], թեև այն փորագրվել է զորավարի մահից երեք տարի հետո։ Նույն ոգով է արտահայտվում 1217 թ. Այրիվանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի գրիչը. «Եւ յանցելում եռի[ց] ամաց թագաւորազն՝ մեծն և աջողակն և ըմբշամարտիկն

---

4 Ա. Հովհաննիսյանի ենթադրությունը, որի համաձայն «խնամիական նման կապ (նկատի ունի Իվանեի և ենթադրյալ Բագրատունի հողագի ամուսնությունը—Հ. Մ.) Բագրատունիների հետ կարող էին ունեցած լինել Իվանեի և Զաքարեի նախնիները ևս» (տե՛ս Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության. գ. Ա, Երևան, 1957, էջ 155) մնում է ոչ միայն չփաստարկված, այլև քիչ հավանական։ XII դարի երկրորդ կեսի Կյուրիկյանների և Զաքարյանների տոհմածառերն ու խնամիական կապերը լավ հայտնի են, իսկ ինչ վերաբերում է գարի առաջին կեսին, ապա այդ տոհմերն իրենց դիրքով դեռևս բավականաչափ տարբեր տեղեր էին գրավում ավատատիրական աստիճանակարգության մեջ՝ խնամիական առնչություն հաստատելու համար։

5 Այս առումով լիովին ուժի մեջ է մնում Կ. Տեր-Մկրտչյանի օրինական հարցը. «Ինչու Կորիկյանների հետ ունեցած խնամությունը իրավունք պիտի տար Զաքարյաններին Բագրատունի կոչվելու» (Կ. Տեր-Մկրտչյան. Նյութեր հայ մելիքության մասին. պրակ Բ, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք. էջմիածին, 1914, էջ 22)։

6 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, VI, Երևան, 1977, էջ 22 (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 24, գիտելիք։

8 Տե՛ս Կ. Ղաֆադարյան. Հաղբատ. Երևան, 1963, էջ 168—169 (ընդգծումն իմն է—Հ. Ա.)։

9 Տե՛ս Գ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Գոռչանք հայոց պատմության մեջ. Անթիլիաս, 1969, էջ 299։

քաջ Զաքարայ, որդին Սարգսի սպարապետին Վրաց արքային, աւաղական մահուամբ բարձաւ յաստեացս»[10]։ Հետևաբար, ավանդույթը շարունակելով է, որ Իվանեն իրեն «թագազն» է անվանում նույն Այրիվանքի արձանագրություններից մեկում[11]։

Վերոհիշյալ փաստերի լույսով իմաստավորվում է նաև Այգեհատի 1223 թ. արձանագրությունը, որտեղ «Գրիգոր սնուցեալ»-ը՝ «Նրջսի թագուհույն և Մամքանայ», հաղորդում է իր շինարարական գործունեության մասին[12]։ Պարզվում է, որ «թագուհի», հետևաբար՝ Բագրատունի է դիտվել նաև Նրջիս Զաքարյանը։ Բացառված չէ, որ Շահնշահ I-ի որդի Զաքարիայի Բագրատունի համարվելն է ակնարկվում Բագնայրի ավետարանի 1232 թ. հիշատակարանում, որտեղ նա «թագաժին» է կոչվում[13]։ Այսպիսով, Բագրատունիներից սերված լինելը Զաքարյանները ընդգծել են շուրջ կես դարի ընթացքում, «Բագրատունիական» ծագման տեսությունն արտացոլվել է սկզբնաղբյուրների երկու տարբեր խմբերում՝ վիմագիր արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում։ Եվ, այնուամենայնիվ, այս ամենը դեռ բոլորը չէ. Զաքարյանների՝ Բագրատունիների հաջորդը գիտվելու հավակնությունները գաղափարախոսական բազմակողմանի ու ծավալուն հիմնավորում են ունեցել։

Նախ՝ Զաքարյանները իրենց արձանագրություններում յուրացրել են Անիի Բագրատունիների տիտղոսաշարի մեջ մտնող բազմաթիվ կարևոր բաղադրիչներ, այդ թվում նաև «շահնշահ» ու «տիեզերակալ» պատվանունները։ Գիտական գրականության մեջ Զաքարյանների տիտղոսները, իհարկե, մշտապես արձանագրվել են, սակայն այդ կատարվել է զուտ ժամանակակից չափանիշների տեսանկյունից։ Պատմաբաններն այս փաստերն օգտագործել են Զաքարյանների հզորության աստիճանը նշելու, հայոց թագավորությունը վերականգնելու նրանց հավակնությունների հիմնավորվածությունը ցուցադրելու առիթով։ Հետազոտողների մի մասն էլ ամենայն լրջությամբ առարկել է ու եզրակացրել, որ Զաքարյաններն ու նրանց մերձավորներն ակնհայտորեն չափազանցության մեջ են ընկել՝ իրենց իշխանությունը բնութագրելիս։ Միջնադարյան վկայությունների ժամանակակից ընկալումը, սակայն, ոչ միայն արդարացված չէ, այլև պարզունակ և միակողմանի է։ Բագրատունի թագավորները, ապա և Զաքարյանները, ամենից քիչ մտածել են ժամանակակիցներին (և նրանց հետ միասին ապագա հետազոտողներին) թյուրիմացության մեջ գցելու մասին և հետապնդել են միանգամայն իրական ու երկրային նպատակներ։ Տիտղոսները նրանց պաշտոնական գաղափարախոսության կարևորագույն տարրերից են եղել, հիմնավորելով, օրինականացնելով, սրբագործելով այդ տոհմերի իշխանությունը։

Անիի Բագրատունիների պատվանունների շարքում ամենահայտնին, անշուշտ, «շահնշահ» տիտղոսն էր, որը Աշոտ II-ի (914—928) ժամանակ-

---

10 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 105։

11 Տե՛ս Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 299։ Դատելով Իվանեի արձանագրած գրավումների տարեգրությունից՝ վիմագրումը կատարվել է 1219 թ. կամ հետո։

12 Տե՛ս Ս. Ջալալյանց. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան. մասն Ա, Տփխիս, 1842, էջ 103։ Որ այստեղ հիշատակված Նրջիսը Զաքարյանն է, երևում է նույն Գրիգորի 1235 թ., Հառիճում թողած արձանագրությունից. «Ես՝ Գրիգոր, սնուցած մեծի Սարգսի դրստերն Նրջսին» (տե՛ս Ս. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքննություն. Երևան, 1978, էջ 83—84)։

13 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178։ Հնարավոր է, որ Զաքարեն «թագաժին» անվանվելու այլ հիմք էլ է ունեցել։ Հարցն այն է, որ հիշատակարանում թագավորական է դիտվում արդեն Շահնշահի դիրքը։

ներից ի վեր կրում էին բոլոր Բագրատունի գահակալները[14]։ Ուստի Զաքարյանների՝ Բագրատունիների իրավահաջորդը ճանաչվելու ձգտումն ակնհայտորեն է արտահայտվել, առաջին հերթին, «շահնշահ» պատվանունը յուրացնելիս։ Այսպես, Զաքարև ամիրսպասալարը «շահնշահ» է անվանվում դեռևս 1191—1196 թթ., մինչև 1199 թ. Բագրատունյաց մայրաքաղաք Անիին տեր դառնալը[15]։ Այդ տիտղոսին Զաքարեն այնքան մեծ կարևորություն է տվել, որ որդու համար նախընտրել է Շահնշահ կրկնանունը։ Ընդ որում՝ վերջինս այնքան գործածական դարձավ, որ գրեթե մոռացության մատնվեց մանկան «Սարգիս» բուն անունը[16]։ Զաքարե ամիրսպասալարի կատարած քայլի կարևորությունն ավելի կընդգծվի, եթե նկատի առնենք, որ «շահնշահ» տիտղոսը, թերևս XII դարի առաջին քառորդից, Դավիթ IV Շինողի (1089—1125) ժամանակներից սկսած, Վրաստանի տիրակալների պաշտոնական տիտղոսաշարի մեջ էր մտնում[17], և, բնականաբար, պետք է մենաշնորհային բնույթ կրեր։

«Շահնշահ» տիտղոսից հետո Զաքարյանները տիրացել էին նաև «տիեզերակալ» պատվանվանը, որը ևս Անիի Բագրատունիների տիտղոսաշարի առանցքային բաղադրատարրերից էր։ Հայ պատմագիտության մեջ թեև ավանդաբար «տիեզերակալ» է ճանաչվում Սմբատ II-ը (977—990)[18], առկա բոլոր տվյալները, այնուամենայնիվ, աներկբայելիորեն վկայում են, որ Բագրատունի գահակալներից առաջինը Սմբատ I-ն (890—914) է կրել «տիեզերակալ» տիտղոսը[19]։ Այն փաստը, որ Սմբատ I-ը «տիեզերակալ» է կոչվում «Քարթլիս ցխովրեբայի» կազմի մեջ մտնող «Քարթլիի մատյանում»[20], ապացուցում է, որ Բագրատունիների նաև այս տիտղոսն էր միջազգային ճանաչման արժանացել[21]։ Այն առկա էր Բագրատունիների տիտ-

---

14 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 1, էջ 73—78։

15 Տե՛ս Ա. Շահինյան. Կոշի կոթողը և նրա արձանագրությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 198—201։ Պ. Մուրադյան. Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Երևան, 1977, էջ 105—106։

16 Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Դ, Երևան, 1943, էջ 110։

17 Տե՛ս Վրաստանի պատմության ակնարկներ. հ. 3, Թբիլիսի, 1979, էջ 256 (վրացերեն)։

18 Տե՛ս Հ. Աճառյան. նշվ. աշխ., էջ 548։ Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 134։

19 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. նշվ. աշխ., էջ 75։ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 269 (բաժնի հեղինակը Ա. Տեր-Ղևոնդյանն է)։ Բացի Ա. Հովհաննիսյանի վկայակոչած Սանահնի Քոթուկից (տե՛ս Կ. Ղաֆադարյան. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 190) և Ա. Տեր-Ղևոնդյանի մատնացուցած մի հիշատակարանից (տե՛ս Գ. Հովսեփյան. Հիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 172), Սմբատ I-ին հայ մատենագրության մեջ «տիեզերակալ» են անվանում նաև պատմիչներ Սամվել Անեցին (տե՛ս Սամուել Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 102—103) և Մխիթար Այրիվանեցին (տե՛ս Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860, էջ 56)։

20 Տե՛ս Քարթլիս ցխովրեբա. հ. 1. Թբիլիսի, 1955, էջ 262 (վրացերեն)։

21 Ա. Արգալաձեն «տիեզերակալ» տիտղոսի՝ վրաց մատենագրության մեջ գործածվելու հնարավոր հիմք է համարում հայ գրավոր կամ բանավոր աղբյուրները (տե՛ս Ա. Արգալաձե. Քարթլիս ցխովրեբան և Հայաստան—Վրաստան փոխհարաբերությունները. Թբիլիսի, 1982, էջ 208—209)։ Սակայն վրաց պատմիչը հաղորդած գրվագը առհասարակ հայտնի չէ հայկական աղբյուրներին։ Քանի որ վրացի պատմիչը դուրս իսկ կասկածի չի ենթարկում «տիեզերակալ» տիտղոսի իրավաղորությունը, թեև նրան քաջ հայտնի է Սմբատ I-ի ողբերգական վախճանը ու դժվար թե հեղինակի համար անհասկանալի է եղել հայերեն բառի

զոսաշարում նաև Գագիկ I-ի[22] (990—1020) և Հովհաննես-Սմբատի[23] (1020—1041) օրոք[24]։ Բագրատունիներ-Զաքարյաններ հերթագայությունը շեշտելու ձգտման ազդեցիկությունը ցույց տալու համար զուգահեռ մեջբերենք երկու վիմագիր արձանագրություն, առաջինը թողնված ժամանակի հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի, երկրորդը՝ նշանավոր «մեծատուն» Տիգրան Հոնենցի կողմից։

Ի ՆՁԾ թուականիս Հայոց եւ ի մեծափառ թագաւորութեանս հզաւր եւ տիեզերակալ Սմբատա, որդւոյ Գագկա Հայոց եւ Վրաց շահայնշահի, կամ եղեւ ինձ, տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի...[25]

Թվին ՈԿԴ, շնորհիւն եւ ողորմութեամբ Այ. յորժամ տիրեց քաղաքիս Անւոյ հզաւր եւ տիեզերակալ ամիրսպասալար եւ մանդատուրթուխուցէս Զաքարիայ եւ որդի նորայ Շահընշահ, ես Տիգրան ծառայ Այ...[26]

Այսպիսով, շուրջ երկու հարյուրամյակ անց, Անիի հերթական տիրակալն ընդունել է, «շահնշահից» բացի, նաև «տիեզերակալ» տիտղոսը։ Հետազոտությունը ցույց է տալիս, որ «տիեզերակալ»-ը կիրառման ուշադրավ առանձնահատկություն է ունեցել։ Մեջբերված արձանագրություններում այն հանդես է գալիս «հզաւր» մակդիրի լծորդումով, և այդ երկուսն այնքան հաճախ են միասին գործածվել, որ հասարակացվել են ու իշխանության բնութագրման երանգ ձեռք բերել։ Այդ միտումն ակնհայտ է Գագիկ I-ի հրովարտակ-արձանագրությունում, որի բանաձևային մասում՝ «կամ եղեւ ինձ՝ Գագիկա, հզաւր եւ տիեզերակալ շահինշահի»[27], կայուն զուգորդություն կազմող «հզաւր եւ տիեզերակալ» տիտղոսները բացահայտորեն երկրորդական կարևորություն ունեն։

Բագրատունիների և Զաքարյանների տիտղոսաշարերի միջև դիտվում է ևս մեկ բնորոշման ընդհանրություն։ Վերևում մեջբերված Անիի ՆՁԾ (1036) թվականի արձանագրությունում Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Հովհան-

---

իմաստը, ապա մնում է կատարել միայն մեկ եզրահանգում՝ վրացի մատենագիրը արձանագրել է միջպետական հարաբերությունների բնագավառին պատկանող փաստ, որի համար հայկական սկզբնաղբյուր ունենալը ամենևին պարտադիր չի եղել։

22 Տե՛ս Ս. Մաղդմյան. Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունը.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 9, էջ 91—92։

23 Տե՛ս Դիվան հայ վիմագրության. I, Երևան, 1966, էջ 48։

24 Պանդալեոն քահանայի 965 թ. հիշատակարանից (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե—ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի. Երևան, 1988, էջ 57—58) երևում է, որ որոշ ժամանակ «տիեզերակալ», ինչպես նաև «արքայից արքա» տիտղոսները կրել են նաև Վասպուրականի Արծրունյաց թագավորության գահակալները։ Դրանցից երկրորդը համապատասխանում էր բյուզանդական «արքոնների արքոն» աստվանվածը, որը շնորհվել էր առաջին երեք Բագրատունի թագավորներին, իսկ Աշոտ II-ի մահից հետո 929 թ. տրվել էր Գագիկ I Արծրունուն (929—943), Վասպուրականի գահակալների մեծաշնորհը կազմելով մինչև X դարի 70-ական թթ. կեսերը (տե՛ս Կ. Ցուզբաշյան. «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից.—«Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 45—47)։ Հավանաբար, հենց այս ժամանակահատվածում էլ Արծրունիներին էր անցել նաև «տիեզերակալ» տիտղոսը։ Տե՛ս Ա. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., էջ 132։ Վ. Վարդանյան. Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. Երևան, 1969, էջ 176—177։ В. А. Арутюнова—Фиданян. Памятная запись священника Пандалеона.—Византийский временник, т. 51, М., 1990, с. 112—118.

25 Դիվան հայ վիմագրության, I, էջ 48։

26 Նույն տեղում, էջ 63։

27 Տե՛ս Ս. Մաղդմյան. Նշվ. աշխ., էջ 91—92։

նես-Սմբատի «թագաւորութիւն»-ը բնութագրում է «մեծափառ» մակդիրով։ Պ. Մուրադյանի դիպուկ կռահմամբ, այդ հայերեն տիտղոսն է, որ արտացոլված է Թեժառույքի վրացերեն արձանագրությունում «բարք-գիդի» (բարք=փառք+մեծ) ձևով, որպես Զաքարե ամիրսպասալարի իշխանության բնորոշում[28]։

Ինչպես և պետք էր սպասել, Զաքարյանները «շահնշահ» և «տիեզերակալ» պատվանունները կրել են այնքան ժամանակ, քանի դեռ նրանց իրական հզորությունն ու ազդեցությունը ինչ-որ չափով համապատասխանում էին նրանց տիտղոսաշարին։ Նրանցից վերջինն Ավագն էր, որ մինչև XIII դարի 40-ական թթ. վերջերը «տիէզերակալ» էր համարվում[29]։

Զաքարյանները իրենց իրավահաջորդությունն ընդգծել են նաև այնպիսի տպավորիչ ձեռնարկումով, ինչպիսին Սանահինում Կյուրիկյանների տոհմական գերեզմանոցը սեփական ընտանեկան հանգստարան դարձնելն է եղել[30]։ Բագրատունիներ-Զաքարյաններ ժառանգականությունը շեշտվել է վանքում կատարված այն վերակառուցումներով, որ իրականացրել են Զաքարյանները[31]։

Ամփոփելով Զաքարյանների՝ Բագրատունիներից սերելու վարկածը հիմնավորող ուղղակի և անուղղակի տվյալների քննությունը, անհրաժեշտ է ընդգծել, որ «Բագրատունիական» ծագման տեսությունը, անշուշտ, ամենաքաղաքականացվածն է։ Այն կյանքի է կոչվել XII դարի վերջում, երբ Զաքարյանները իրապես տիրում էին Բագրատունիների արքայատոհմի տարբեր ճյուղերի ժառանգության զգալի մասին և շուտով ավելի էին ընդարձակելու իրենց պատկանող տարածքները։ Զաքարյանների տիտղոսաշարի քննությունից ակներև է, որ այդ ժամանակահատվածում նրանք հավակնում էին դառնալու ոչ թե Կյուրիկյանների, այլ Շիրակի Բագրատունիների քաղաքական ժառանգորդը։ Հետևաբար, իրենց Բագրատունի հռչակելիս նրանք առաջին հերթին ելնում էին նաև Անիի շահնշահների իրավահաջորդը դարձած լինելու ծանրակշիռ փաստարկից։

Մեր ամբողջ շարադրանքի լույսի ներքո պարզ է դառնում, որ Բագրատունիների ու Զաքարյանների իրական ազգակցության մասին պնդելը կնշանակեր վերացարկվել միջնադարյան իրողություններից ու բառացի ընկալել սկզբնաղբյուրների մի մասի հավաստիացումները։ Բնութագրական փաստ է, որ ուսումնասիրողներից առայժմ միայն Կ. Տեր-Մկրտչյանն է փորձել հիմնավորել Զաքարյանների՝ Բագրատունիներից սերելու վարկածը[32], բայց այդ տեսակետը ընդունելություն չի գտել գիտական գրականության մեջ։

---

28 Պ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 117—119։

29 Տե՛ս Գ. Սարգսյան. «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը.—«էջմիածին», 1951, ԺԱ.—ԺԲ, էջ 50։ Հ. Եղիազարյան. Դեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորի և Քառասնից մանկանց վանքերը և գյուղի մյուս՝ առավել կարևոր հուշարձաններն ու դրանց վիմագիր արձանագրությունները.—«էջմիածին», 1971, Գ, էջ 45։

30 Իրենք՝ Կյուրիկյանները, սկսած XI դարի վերջից, թաղվում էին Հաղբատում (տե՛ս Ղ. Մովսեսյան. Լոռիի Կյուրիկյան թաղավորներու պատմությունը. Վիեննա, 1923, էջ 55։ Ռ. Մաթևոսյան. Տաշիր-Զորագետ. Երևան, 1982, էջ 100)։ Զաքարյաններից Սանահինում են հուղարկավորվել Սարգիս Մեծը և Զաքարե II-ը, իսկ հետո Զաքարյանների տարբեր տոհմաճյուղերը այլևայլ վանքերում են գերեզմանատներ հիմնել։

31 Տե՛ս H. Khalpakchian. Le tombeau des Zakarides à Sanahin. — E'tudes Arméniennes in memorium H. Berbérian, Lisbon, 1986, p. 357—374.

32 Տե՛ս Կ. Տեր-Մկրտչյան. նշվ. աշխ., էջ 18—31։

* * *

1196 թ., երբ ազատագրվեց Ամբերդը, ի պատիվ այդ հաղթանակի հուշարձաններ կանգնեցվեցին ինչպես հայերեն[33], այնպես էլ արաբերեն լեզուներով[34]։ Ամբերդի արաբերեն վիմագրում, Զաքարե ամիրսպասալարի և Իվանեի անուններից հետո, ընթերցվում է «Աս-սարունի» բառը, որին տոհմանվան դեր է հատկացվում։ Այսպիսով վկայված է Զաքարյանների ծագման երրորդ վարկածը, այն էլ հենց տոհմի անվանի ներկայացուցիչների կողմից։ Նրանց Արծրունի անվանելը Ա. Տեր-Ղևոնդյանը բացատրում է նշանավոր տոհմերի հետ կապվելու ցանկությամբ։ Ըստ հետազոտողի, այս հարցում վճռական դեր է կատարել այն հանգամանքը, որ Սարդիս Մեծն ամուսնացած էր Ամիր-Քուրդ Արծրունու քրոջ՝ Սահակդուխտի հետ։ Այնուհետև. եթե Զաքարյանները Բագրատունի են կոչվել Կյուրիկյանների հետ ունեցած խնամության հիման վրա, ապա Զաքարեն ու Իվանեն էլ կարող էին Արծրունի անվանվել՝ այս անգամ կապվելով Արծրունիների տոհմի հետ[35]։ Այս լիովին տրամաբանական բացատրությունը հավանական կդիտվեր, եթե հիրավի Զաքարյանները Բագրատունի դիտված լինեին սոսկ Կյուրիկյանների հետ խնամության հիմքի վրա, ինչպես նաև Մահկանաբերդցիների ու Արծրունիների տոհմակցության աներկբայելիության պարագայում։ Սակայն հարցն այն է, որ Մահկանաբերդի գավառի տերերը XII դարի երկրորդ կեսում իրենց դեռևս Արծրունիների տոհմի հետ չէին առնչում։ Այդ վարկածի տարածվելու նշանները ի հայտ են գալիս միայն XIII դարի երկրորդ կեսում, Սագուն II աթաբեկի գործունեության հետևանքով[36]։ Հետևաբար, Զաքարյանները չէին կարող Արծրունի անվանվել՝ շահարկելով Մահկանաբերդցիների հետ խնամիական կապը։

Ամբերդի արաբերեն արձանագրությունում հավաստված փաստն ավելի շուտ հնարավոր է մեկնաբանել XII դարի վերջի—XIII դարի սկզբի քաղաքական իրադարձությունների ետնախորքի վրա։ Զաքարյանների՝ Արծրունի կոչվելու հավակնությունները, ըստ երևույթին, Զաքարեի և Իվանեի քաղաքական ծրագրերի յուրօրինակ արտացոլումն են։ XII դարի վերջին տարիները և հաջորդ հարյուրամյակի սկիզբն այն ժամանակահատվածն են կազմում Հարավային Հայաստանի մեծ մասը զբաղեցնող Շահ-Արմենների պետության պատմության մեջ, երբ այդ ամիրայությունը տենդագին պայքար էր մղում հանուն գոյատևման։ Իրավիճակից ձգտում էին օգտվել Զաքարյանները, որոնք մեկ անգամ չէ, որ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Մանազկերտ, Արճեշ և Խլաթ։ Զաքարյանների հարավային քաղաքականությունն անհաղթահարելի խոչընդոտների հանդիպեց միայն 1207 թ. հետո, երբ Խլաթում հաստատվեցին Այուբյանները[37]։ Կարելի է ենթադրել, որ Արծրունի հռչակվելը Զաքարյանների ծրագրերի հաջողությունը ապահովելուն նպատակաուղղված միջոցառումներից մեկն է եղել։ Արծրունի կոչվելով, նրանք կարող էին Վասպուրականի և հարակից տարածքների օրինական տիրակալի կեցվածք ընդունել և համապատասխան ռազմական գործողություններ ձեռնարկել, ակնկալելով հիմնականում հայերով բնակեցված ամիրայության

---

33 Տե՛ս Ա. Շահինյան. նշվ. աշխ., էջ 198—201։

34 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Զաքարիայի և Իվանեի արաբատառ արձանագրությունը Ամբերդում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 185—187։ A. A. Хачатрян. Корпус арабских надписей Армении, Вып. I, Ереван, 1987, с. 47.

35 Ա. Տեր-Ղևոնդյան. Զաքարիայի և Իվանեի..., էջ 186—187։

36 Տե՛ս Գրիգոր վարդապետ. Պատմութիւն Թաթարաց. Երուսաղեմ, 1974, էջ 42, 48։ Մխիթար Այրիվանեցի, էջ 88։

37 Տե՛ս Հ. Մարգարյան. Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII—XIII դդ.).—«Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 1, էջ 36—43։

բնակչության աջակցությունը։ Ինչպես հայտնի է, խլաթում 1210/1211 թթ. կրած անհաջողությունից հետո Զաքարյանների առաջխաղացումը դեպի հարավ կանգ առավ, հետևաբար և Արծրունիների ժառանգորդը դառնալու ձգտումը երկար պահպանվել չէր կարող։ Ինչպես ցույց տրվեց վերևում, Զաքարյանները ամենից ավելի հաճախ են ուղղակի Բագրատունի կոչվում XIII դարի երկրորդ տասնամյակում։ Հակված ենք կարծելու, որ այդ հանգամանքը նաև Զաքարյանների ծագման «Արծրունիական» տեսությունը ընդմիշտ մոռացության մատնելու հետևանք է։

* * *

Զաքարյանների տոհմակունքների հարցին անդրադառնում է նաև նրանց գործունեությանը քաջածանոթ հեղինակը՝ Թամար թագուհու առաջին պատմիչը։ Զաքարև ամիրսպասալարին բնութագրելու առիթով մատենագիրը նշում է, թե նա Արտաքսերքսես Երկայնաբազուկի տոհմակիցն էր և այդ հանգամանքով է բացատրում ականավոր զորավարի բարեմասնությունները[38]։ Այս տեղեկության ոչ պատմական լինելն ակնհայտ է և Աքեմենյաններ-Զաքարյաններ ազգակցությունը փաստարկելու փորձերը կանխապես անհաջողության են դատապարտված։ Այնուամենայնիվ, վրացի պատմիչի հաղորդումը զուրկ չէ կարևորությունից՝ ինչպես պատմագրական ավանդույթի ազդեցության, այնպես էլ որոշակի քաղաքական մտածողության արձագանք լինելու տեսանկյունից։ Հայտնի է, որ վրացի հեղինակը քաջածանոթ է անտիկ աշխարհի իրողություններին և դասական հնադարի նշանավոր դեմքերին։ Աքեմենյան նշանավոր արքաներից մեկի հիշատակությունը, ընդ որում անվան հունական ձևով, այդ տեղյակության վկայություններից է[39]։ Զաքարյաններին Աքեմենյան ծագում վերագրելը նաև ցույց է տալիս այն տեղը, որը Վրացական թագավորության տոհմերի յուրօրինակ աստիճանակարգության մեջ Զաքարյաններին է հատկացնում պատմիչը։ Վրաց Բագրատունիներին նա սերված է համարում աստվածաշնչական նշանավոր Դավիթ արքայից (Դավիթիանի), իսկ Թամար թագուհու ամուսին Դավիթ Սոսլանին՝ սուրբդրական այդ թագավորի եղբորորդի Եփրեմից (Եփրեմիանի)։ Վրացի պատմիչը այդպիսով ցանկացել է ընդգծել վրաց Բագրատունիների առավելությունը օսական թագավորական տոհմի նկատմամբ։ Քանի որ աստվածաշնչական ավանդույթը Դավթի սերունդներին ակնհայտորեն բարձր է դասում Եփրեմի շառավիղներից, ապա պարզ է, որ «Դավիթիանի» և «Եփրեմիանի» անվանումները քաղաքական-գաղափարախոսական որոշակի տեսությունների արտացոլում են[40]։ Վրացի հեղինակի հայեցակերպի համաձայն, Զաքարյանները նույնպես թագավորական ծագում են ունեցել, բայց ազնվատոհմությամբ, այնուամենայնիվ, զիջել են թագավորական զույգին։ Միաժամանակ՝ վրացի պատմիչը հետևել է «հին» և «օտար» ծագման գերա-

---

38 Տե՛ս Քարթլիս ցխովրեբա. հ. 2, Թբիլիսի, 1959, էջ 110 (վրացերեն)։

39 Հայկական սկզբնաղբյուրները Արտաքսերքսես Աքեմենյանին (մ. թ. ա. 465—424) Արտաշես Երկայնաբազուկ են անվանում (տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ. Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 23։ Մխիթար Այրիվանեցի, էջ 40։ Վարդան Արևելցի. Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 41), այդպես հայացնելով նրա մականունը։ Այդ պատճառով էլ հայ պատմագրության մեջ, որպես վրացերենի «Մխարգրձելի»-ի (բառացի նշանակում է «երկարաուս») հայացված թարգմանություն, տարածում է ստացել Զաքարյանների «Երկայնաբազուկ» անվանումը։

40 Տե՛ս Կ. Կեկելիձե. Վրացական քաղաքական մտածողության մի պարագա դասական ժամանակաշրջանի գրականության մեջ.—Էսյուդներ հին վրաց գրականության պատմությունից, հ. 1, Թբիլիսի, 1956, էջ 312—318 (վրացերեն)։

դասության հայացքին[41], որին, ինչպես ցույց է տրվել մեր նախորդ հոդվածում, Զաքարյանների տոհմակունքը լուսաբանելիս տուրք են տվել նաև հայ հեղինակները։

* * *

Զաքարյանների ծագման խնդրի գոհացուցիչ լուսաբանումն անհնար է պատկերացնել առանց վերլուծելու XI—XII դարերի այն իրողությունները, որոնք անմիջականորեն են առնչվում տոհմի վաղ շրջանի պատմությանը։ Գիտական գրականության քննությունից, սակայն, այն տպավորությունն է ստեղծվում, թե հետազոտողները բավարարվել են նախորդ էջերում ներկայացված վարկածների վերաշարադրումով, հաճախ անուշադրության մատնելով մնացած սկզբնաղբյուրների, իրենց նախընտրած տեսությանը հակասող, տեղեկությունները։ Զարմանք է հարուցում այն հանգամանքը, որ պատմաբաններին բնավ չեն զբաղեցրել Զաքարյանների գաղթի հավանականության, Կյուրիկյան Հայաստանում նրանց ռազմական ու քաղաքական առաջընթացի իրական հեռանկարի, քրիստոնեություն ընդունելու նպատակահարմարության հարցերը։ Մի խոսքով՝ իրադարձությունների հավաստիության ստուգումը, որպես կանոն, դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից։ Փոխարենը նրանք առատորեն տարբեր են փոխառել Զաքարյանների ծագման իրենց գերադասած վարկածը լիովին բացառող մյուս տեսություններից։ Մասնավորապես, Զաքարյանների ծագման «Բագրատունիական» և «Արծրունիական» տեսությունների պաշտպանները ընդունել են իշխանատոհմի «քրդական» սերման հայեցակետի առանցքային գաղափարները՝ գաղթի, հարավից հյուսիս տեղաշարժի, Կյուրիկյանների թագավորությունում հաստատվելուց հետո հայադավանության ընդունման վերաբերյալ։ Այդ է պատճառը, որ Զաքարյանների վաղնջական պատմությունը ներկայացնելիս գիտնականները հաճախ զուգակցել են իրականն ու մտացածինը, թույլ տվել ակնհայտ վրիպումներ։

Ցույց տանք մեր դատողությունների արդարացիությունը միայն մեկ, բայց առանցքային խնդրի՝ Զաքարյանների նախնիների տեղաշարժի ժամանակի հարցի օրինակով։ Կառչած մնալով տոհմի գաղթական լինելու տեսակետին՝ ուսումնասիրողների մեծ մասը անխուսափելիորեն բախվել է այդ առեղծվածի լուծման դժվարությունների հետ։ Ընդ որում՝ նրանց առջև ծառացած խնդրի լուծումը սկզբունքորեն անհաղթահարելի չի եղել։ Հիրավի. եթե Զաքարյանների նախնիները Տաշիր-Զորագետ են տեղափոխվել Սարգիս II Մեծից երկու (ըստ Կիրակոս Գանձակեցու)[42] կամ երեք (Վարդան Արևելցու վկայությունների համաձայն)[43] սերունդ առաջ, ապա, նախապես պարզելով Զաքարյանների մեկ սերնդի կյանքի միջին տևողությունը, կարելի է բավական ճշգրիտ հաշվարկներ կատարել։ Բայց, որքան էլ տարօրինակ է, ուսումնասիրողները չեն ընթացել այդ միակ տրամաբանական ուղիով։ Հաշվումները կատարվել են «աչքաչափով» և Զաքարյանների գաղթը ենթադրվել է այս կամ այն Կյուրիկյան թագավորի կառավարման ժամանակաշրջանում։ Այս առումով հատկապես պերճախոս է Աս. Շահնազարյանցի հետևյալ դատողությունը. «Խոսրով, Ավագ Սարգիս, Զաքար 1 և Սարգիս Մեծ. յուրաքանչյուրին վերագրելով մինչև իսկ 40—45 տարվա կյանք, եթե ոչ ավելի, կգանք այն եզրակացության, որ Զաքարյանները կարող են գաղթած լինել 11-րդ

---

41 Վրաց միջավայրում այդօրինակ գաղափարների ազդեցիկության մասին տե՛ս Շ. Մեսխիա. Նշվ. աշխ., էջ 209—210։ Կ. Կեկելիձե. Ընձենավորի հեղինակը և նրա գրության ժամանակը.—Էսյուդներ հին վրաց գրականության պատմությունից, հ. 12, Թբիլիսի, 1973, էջ 54 (վրացերեն)։

42 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 162։

43 Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 181։

դարու առաջին կեսին»[44]։ Ուսումնասիրողներից ոմանք նույնիսկ ավելի հեռու են գնացել և Զաքարյանների նախնիների որոշակի թվով սերունդների գործունեությունը հաշվել են ըստ Վրաստանի արքաների կառավարման ժամանակաշրջանների[45], երբ որ վերջիններս այդ պատմափուլում որևէ առնչություն չեն ունեցել Զաքարյանների հետ։

Այսպիսով, անկախ այն հանգամանքից, թե որքանով ենք հավատի համարում Զաքարյանների գաղթի տեսությունը, հարկադրված ենք պարզել կոնկրետ Զաքարյանների տոհմի հետ կապված երկու էական ժամանակագրական խնդիր։ Որքա՞ն է եղել կյանքի միջին տևողությունը Զաքարյանների տոհմում, քանի՞ տարի է ակտիվ ռազմաքաղաքական գործունեությունծավալել յուրաքանչյուր սերունդ։

Առաջին հարցին պատասխան տալու համար բերենք առաջին Զաքարյաններից Սարգիս II Մեծի, Զաքարե II-ի և Իվանե I-ի ու երկու հիմնական տոհմաճյուղերի՝ Շահնշահյան և Ավագյան տների մասին մեր ունեցած տվյալները, ներկայացնելով դրանք աղյուսակի տեսքով[46]։

Անուն	Ծննդյան ժամանակ	Մահվան ժամանակ	Կյանքի միջին տևողություն	Սերունդ
Սարգիս II	1120–30-ական թթ.	1187	57—67	1
Զաքարե II	1150-ական թթ. 2-րդ կես	1212	57—62	2
Իվանե I	Նույնը—60-ական թթ. 1-ին կես	123[illegible]/34	78/79—8[illegible]/89	2
Շահնշահ I	1197	1261/62	64—65	3
Ավագ	1180—90-ական թթ.	1250	60—70	3
Իվանե II	1220—30-ական թթ.	1284—91	54/61—64/71	4
Շահնշահ II	1260-ական թթ.	1320	60/65	5

Այսպիսով, մեր հաշվումները վերաբերում են 5 սերնդի, ընդ որում նկատի ենք առնում միայն անդրանիկ որդիներին առնչվող տվյալները։ Միակ բացառությունը անում ենք վաղամեռիկ Զաքարե III-ի համար, որի փոխարեն բերում ենք եղբոր՝ Իվանե II-ի մասին եղած ցուցումները։

Աղյուսակի համար ելակետային և վերջակետային սահմաններ են ծառայել 1-ին և 5-րդ սերունդները։ Ընտրությունը պատահական չի եղել։ Ամենասկզբում տեղադրել ենք երկու տոհմաճյուղերի իսկական հիմնադիրների՝ Զաքարե II-ի և Իվանե I-ի հոր՝ Սարգիս II Մեծի մասին տեղեկությունները։ Ամենավերջում Շահնշահ II-ի տվյալներն են, քանի որ երկու եղբայրների ծոռները՝ Շահնշահ II-ը և Խուանդզեն XIII դարի վերջում ամուսնացել էին միմյանց հետ, և այդպիսով յուրօրինակ շրջանակը կրկին փակվել էր, Զաքարյանների գլխավոր տոհմաճյուղերը այդ զույգի մեջ վերստին միավորվել էին։ Միջանկյալ 2-րդ և 3-րդ սերունդները առկա են երկուական անդամներով, ավելի ներկայացուցչական դարձնելով համահավաք աղյուսակը։ 4-րդ սերնդից վերցրել ենք միայն Իվանե II-ի տվյալները, քանի որ Ավագյանների տոհմաճյուղի միակ անդամ Խոշաքը, թույլ սեռը ներկայացնելով, տիպական օրինակ չի կարող ծառայել նմանօրինակ հաշվարկների համար։ Ար-

44 Ա ս. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 73 (ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

45 Տես M. Brosset. Op. cit., p. 267; Շ. Մ ե ս խ ի ա. նշվ. աշխ., էջ 229։

46 Ժամանակագրական ցուցումները վերցնում ենք Զաքարյանների տոհմի բոլոր անդամների մասին մեր կազմած հարցաթերթիկներից (տե՛ս Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Տիրապետող դասակարգը Հայաստանում XII—XIII դարերում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 44—45)։

դյունքում ստացվել է, որ Զաքարյանների տոհմում կյանքի միջին տևողությունը եղել է 61/62-ից 68/69 տարի, որը առանձին անակնկալ համարվել չի կարող։

Սակայն ավելի հուսալի ժամանակագրական կռվաններ կարող ենք ստանալ, եթե հաշվարկենք Զաքարյանների ռազմաքաղաքական ակտիվության միջին տարեքանակը։ Հարցն այն է, որ միջնադարյան գործիչների ծնընդյան ժամանակը շատ ավելի վատ է հայտնի, քան նրանց մահվան տարեթիվը։ Զաքարյանների դեպքում, օրինակ, ամբողջ աղյուսակից կոնկրետ տեղյակ ենք միայն մեկի լույս աշխարհ գալու տարեթվին, երբ որ հավասարակ տվյալները միանգամայն այլ պատկեր են ներկայացնում. ճշգրիտ չէ լոկ մեկի մահվան թվականը։ Բացի այդ, չմոռանանք, որ Զաքարյանները, գրեթե առանց բացառության, ռազմական գործիչներ են եղել, որոնց անվան հետ կապված տվյալները համեմատաբար լավ են արտացոլված սկզբնաղբյուրներում։ Բացի այդ, նրանց զինվորական կյանքի սկիզբը և ավարտը սահմանափակված են եղել որոշակի կենսաբանական հնարավորություններով։ Հարկ եղած պահին ծերացած զորավարը հարկադրված պետք է թողներ ասպարեզը։ Հիրավի, այդ էլ տեղի է ունեցել Իվանե I-ի հետ, որը 1225 թ. հետո որդուն էր զիջել պետական ու զինվորական գործերի վարումը։ Միևնույն սկզբունքներով կազմված աղյուսակը բացահայտում է հետևյալ պատկերը։

Անուն	Ինքնուրույն գործունեության սկիզբը	Գործունեության ավարտը	Գործունեության միջին տևողություն	Սերունդ
Սարգիս II	1161-ից ոչ ուշ	1187	26	1
Զաքարե II	1184/5	1212	27/28	2
Իվանե I	1190/91	1225	34/35	2
Շահնշահ I	1220-ից ոչ ուշ	1261/2	41/42	3
Ավագ	1225	1250	25	3
Իվանե II	1259-ից ոչ ուշ	1284—91	25/32	4
Շահնշահ II	1291-ից ոչ ուշ	1320	29	5

Պարզվում է, որ յուրաքանչյուր սերունդ ինքնուրույնաբար ակտիվորեն մասնակցել է ծավալված իրադարձություններին միջին հաշվով 29/30 տարվա ընթացքում։ Հաշվի առնելով, որ Զաքարյանների մի մասին վերաբերող տվյալները նրանց գործունեության իրական սկզբի անցքերը չէ, որ արտացոլում են (չորս դեպք), ապա որպես միջին թիվ կարելի է վերցնել 30-ը։ Մեր մոտավոր, բայց և ավելի մեծ վստահություն ներշնչող տվյալները հուշում են, որ Զաքարյանների ամեն մի սերունդ ակտիվ ինքնուրույն գործունեություն է ծավալել 31/32—38/39 տարեկան հասակից սկսած։ Եթե պատկերացնենք տոհմի տեղափոխության հետ կապված հարցի ողջ պատասխանատվությունը, ապա թվում է, այդ տարիքն է այն սահմանը, որից ստորև գտնվող տղամարդը կդժվարանար ստանձնել նման քայլի հետևանքների բեռը։

Արդ կատարենք հաջորդ քայլը և պարզենք, թե Սարգիս Մեծին նախորդող երեք սերունդներից յուրաքանչյուրը ինչպիսի՞ ժամանակագրական շրջաններում է ծավալել իր գործունեությունը։ Կստացվեն հետևյալ ժամանակագրական նշանաձողերը։

1-ին սերունդ՝ ծնվել է XI դարի 3—4-րդ տասնամյակում, գործել է շուրջ 1070—1100 թթ.։

2-րդ սերունդ՝ ծնվել է XI դարի 6—7-րդ տասնամյակում, գործել է շուրջ 1100—1130-ական թթ.։

3-րդ սերունդ՝ ծնվել է XI դարի վերջին—XII դարի առաջին տասնամյակում, գործել է շուրջ 1130—1160-ական թթ.։

Հաշվումներից պարզ է դառնում, որ Սարգիս II Մեծի հայրը՝ դիտական դրականությունից հայտնի Զաքարե I-ը կամ հայ պատմիչների նշած Վահրամը, թերևս, առհասարակ որևէ կապ չի ունեցել Կյուրիկյանների հետ։ Նա գործել է այն ժամանակահատվածում, երբ Տաշիր-Զորագետին վաղուց արդեն տիրապետել էին վրացիները։ Սարգիս Մեծի պապը՝ արձանագրություններից հայտնի Ավագ Սարգիսը կամ հայ միջնադարյան պատմագրության մեջ հիշատակված Զաքարիան, եղել է, հավանաբար, առաջինը, որը կապ է հաստատել երկրամասի նոր տերեր՝ Օրբելի իշխանների հետ։ Նրա գործունեությունը բաժանվել է երկու փուլերի (շուրջ 1070—1113 կամ 1118—շուրջ 1130 թթ.), որոնցից միայն առաջինի ժամանակ նա կարող էր ծառայել Կյուրիկյաններին։ Հետևաբար, Կյուրիկյանների և Զաքարյանների միջև հիմնական կապերը վերագրելի են XI դարի վերջին երեսնամյակին, երբ ասպարեզի վրա էր Սարգիս Մեծի պապի հայրը՝ Վարդան Արևելցու անվանակոչած Սարգիսը կամ, ինչպես որ երկար ժամանակ նրան սխալմամբ անվանում էին գիտնականները՝ Խոսրովը[47]։

Այս նախնական հաշվարկներից հետո պետք է պարզել հետևյալը՝ ի՞նչ չափով են այդ ժամանակագրական ուղենիշներին համապատասխանում Զաքարյանների նախնիների գաղթի ժամանակի մասին հետազոտողների տեսակետները։

Այս առումով ամենակոնկրետ և ամենախոցելի թվականը նշում է Զաքարյանների ծագման «Արծրունիական» տեսության հետևորդ Ս. Երեմյանը։ Նրա կարծիքով, Զաքարյանների նախնի Խոսրովը 1048 թ. Մեծ Զամ դետի կիրճում սելջուկների դեմ բյուզանդական զորքի տարած հաղթանակից հետո իր տոհմով անցել է Գուգարք և ճանաչել Լոռու թագավորի գերիշխանությունը[48]։ Գիտնականը չի բացատրում, թե ինչո՞ւ հենց այդ ժամանակ պետք է գաղթեին Զաքարյանները, ի՞նչ կապ կա սելջուկների ու բյուզանդացիների միջև ճակատամարտի ու Զաքարյանների տեղափոխության միջև, բայց առանց այդ էլ պարզ է, որ նրա մատնանշած տարեթիվը ճիշտ լինել չի կարող։ Կարծեցյալ Խոսրովը այդ ժամանակ դեռևս երեխա կամ պատանի պետք է լիներ, առ այդ՝ հեռու քաղաքական ասպարեզից։

Զաքարյանների գաղթը դեպի Հայաստան 1044—1050, իսկ բնակության հաստատումը Տաշիր-Զորագետում՝ 1050—1063 թթ. է դնում Աս. Շահնազարյանցը։ Հենվելով Վարդան Արևելցու «առ թագաւորսն Զորոյ գետին» արտահայտության վրա[49], հետազոտողը կարծում է, որ Զաքարյանների տեղափոխությունը տեղի է ունեցել այնպիսի ժամանակահատվածում, երբ Տաշիր-Զորագետում միաժամանակ թագավորել են երկու արքա, իսկ 1050—1063 թթ. երկրամասում հաստատապես թագավորել են Կյուրիկե և Սմբատ եղբայրները[50]։ Նախ՝ այդ հաշվարկների հիմքի, և ապա՝ հավանականության մասին։ Աս. Շահնազարյանցը անհետևողականություն է դրսևորում, երբ Վարդան Արևելցու վերոբերյալ արտահայտությունը մեկնաբանելիս առաջին հերթին չի հենվում իր իսկ պատմիչի այլ տեղեկությունների վրա։ Իսկ իրողությունն այն է, որ Վարդան Արևելցին վկայում է, թե Կյուրիկեն միայնակ է թագավորել։ Փոխարենը, մատենագիրը համարում է, թե միասին են թագավորել Կյուրիկեի Աբաս և Դավիթ որդիները[51]։ Հետևաբար,

---

47 Տե՛ս Ա. Ի. Շահնազարյան. Զաքարյանների տոհմածառի հարցի շուրջ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 204—209։

48 Տե՛ս Ս. Երեմյան. «Զաքարյաններ» բառահոդված.—ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 676։

49 Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 181։

50 Տե՛ս Աս. Շահնազարյանց. նշվ. աշխ., էջ 73—74։

51 Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 141—142։

«թագաւորսն» բառի այն մեկնաբանումը, որն առաջարկում է Աս. Շահնազարյանցը, սկզբից ևեթ մերժելի է։ Ակնհայտ է, որ պատմիչն այն անորոշաբար է գործածել, այլապես նա չէր վարանի անվանել Կյուրիկյան կոնկրետ գահակալին, որոնցից բոլորի անուններն էլ, ի գեպ, նրան քաջահայտ էին։ Եթե խնդրո առարկա արտահայտությունը անգամ բառացի ընկալենք, ապա այդ դեպքում, ելնելով հեղինակի իսկ վկայություններից, այն պարտավոր ենք վերագրել Աբաս և Դավիթ եղբայրներին, որոնք իշխել են Տաշիր-Զորագետում մոտավորապես 1090—1113 թթ.։

Այժմ Աս. Շահնազարյանցի հաշվումների հավանականության մասին։ Արդեն տեսանք, որ նա Զաքարյանների ամեն մի սերնդին 40—45 տարվա կյանք է շնորհում և նրանց գաղթը գնում XI դարի առաջին կեսին։ Բայց եթե, հետևելով հետազոտողին, ելակետ ընդունենք Սարգիս Մեծի մահվան տարեթիվը (1187) և հաշվենք մատնանշված չորս սերնդի կյանքի տևողությունը (4×40—45=160—180), ապա կստանանք 1027—1007 թթ., որոնք բավականաչափ հեռու են դարի առաջին կեսի ավարտին հարող 1044—1050 թթ.։ Բայց ուսումնասիրողը հետագայում ևս հետևողական չի գտնվել հաշվումների մեջ։ Զաքարյանների գաղթի սկիզբը կամայականորեն 1044 թ դնելուց հետո, նա տոհմի տեղափոխության վերին սահմանագիծ է ընդունում 1063 թ.։ Բայց 1063 թ. ընդամենը այն վիմագիր արձանագրության տարեթիվն է, որտեղ միասին հիշատակվում է հետազոտողի նախընտրած թագավորական զույգը՝ Կյուրիկեն ու Սմբատը[52]։ Սակայն չէ որ ամենևին չի բացառվում նրանց համատեղ կառավարումը նաև հետագայում։ Հանգամանք, որը քաջ հայտնի է եղել նաև Աս. Շահնազարյանցին։ Զարմանալին այն է, որ նա անգամ մեջբերում է Հաղբատաձորի վիմագրերից մեկը, որտեղ Կյուրիկեն ու Սմբատը միասին են հիշատակվում նույնիսկ 1089 թ.[53]։ Բայց դա չի խանգարել ուսումնասիրողին հաջորդ իսկ էջում Կյուրիկեի ու Սմբատի համատեղ կառավարումը հանկարծակի ընդհատել 1063 թ.։ Պատճառը, անշուշտ, այն է, որ նա երկյուղել է չափազանց հեռանալ կամայականորեն կանխանշած ժամանակագրական ուղենիշներից։ Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ Աս. Շահնազարյանցի փաստարկներն ու հաշվարկները հեռու են համոզիչ լինելուց։

Զաքարյանների տեղափոխությունը XI դարի 50—60-ական թթ. է թվագրել նաև Շ. Մեսխիան, սակայն նրա համար ելակետային են եղել այլ իրողություններ։ Ուսումնասիրողը վճռորոշ նշանակություն է տվել Հաղբատի արձանագրություններից մեկին[54], որտեղ, գիտության մեջ լայնորեն տարածված կարծիքի համաձայն, հիշատակվում են Զաքարյանների նախնիներ Ավագ Սարգիսն ու Խոսրովը։ Այդ արձանագրության մեջ վկայված Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդությունը թվագրելով XI դարի 50—60-ական թթ.՝ վրացի գիտնականը ենթադրել է, որ Զաքարյանների նախնիները այդ դարի 60-ական թթ. ուշ չէին կարող տեղափոխված լինել Տաշիր-Զորագետ[55]։ Սակայն, ինչպես վերջերս ցույց տվեց Ա. Ի. Շահնազարյանը, Հաղբատի վերոհիշյալ արձանագրությունը իրականում որևէ կապ չունի Զաքարյանների հետ և փորագրվել է XIII դարում[56]։ Հետևաբար, Շ. Մեսխիայի եզրակացությունը ևս, հիմնված լինելով անհավաստի փաստերի վրա, ընդունելի համարվել չի կարող։

---

52 Տե՛ս Կ. Ղաֆադարյան. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 187։

53 Տե՛ս Աս. Շահնազարյանց. նշվ. աշխ., էջ 73։

54 Տե՛ս Կ. Ղաֆադարյան. Հաղբատ, էջ 161։

55 Տե՛ս Շ. Մեսխիա. նշվ. աշխ., էջ 231—232։

56 Տե՛ս Ա. Ի. Շահնազարյան. նշվ. աշխ., էջ 208—209։ Բնութագրական է, որ հեղինակը, համոզիչ կերպով պարզելով հանդերձ Հաղբատի խնդրո առարկա արձանագրության իրական ժամանակը, ինքը ևս XI դարի կեսերին է ենթադրում Զաքարյանների նախնիների գաղթը (տե՛ս նույն տեղում, էջ 209)։

Զաքարյանների կարծեցյալ գաղթի ժամանակի պարզաբանումը, որը սկզբունքային նշանակություն է ձեռք բերում այդ տոհմի հետագա էթնոմշակութային բարդ էվոլյուցիայի խնդիրը արծարծելիս, ցավալիորեն վրիպել է ընտանիքի «քրդական» ծագմանը և «հայանալուն» հավատացող հետազոտողների մեծ մասի ուշադրությունից։ Նրանցից միայն Վ. Մինորսկին է հպանցիկ ենթադրել, որ Զաքարյանների՝ Սարգիս II Մեծին նախորդող սերունդը՝ Ավագ Սարգիս I-ը և Զաքարե I-ը «մեզ 1100 թվականից ետ հեռու չի տանի»[57]։ Մնացած հետազոտողներն ավելի զգուշավոր են գտնվել Զաքարյանների դաղթի ճշգրիտ ժամանակահատվածը մատնանշելու առումով և ավելի ընդգրկուն փուլ են ենթադրել[58]։

Այնուամենայնիվ, անդամ Զաքարյանների ծագման տարբեր վարկածների հետևորդ դրեթե բոլոր հետազոտողները համակարծիք են գտնվել մի հարցում. նրանք, նույնիսկ «Բագրատունիկան» ու «Արծրունիկան» տեսությունների պաշտպանները, համոզված են, որ Զաքարյանների նախնիները դաղթել են Զորագետ, նախապես ունենալով ետար էթնիկական կամ դավանական ծագում՝ միայն այստեղ հայանալով կամ վերագտնելով իրենց բուն ծագումը։ Այսպիսով, մերօրյա հետազոտողներն անգամ դժվարացել են շեղվել Մովսես Խորենացու կանխորոշած ուղուց և հավատարիմ են մնացել միջնադարյան պատմագրության ոգուն։

Օրինակ, Զաքարյանների «քրդական ծագման» տեսությունը մերժելով հանդերձ, Ս. Երեմյանը լիովին հետևել է խորենացիական կերպաձևերին։ Նա նույնիսկ հարկադրված է եղել Արծրունիների «քրդացած ճյուղ» ենթադրել և ապա միայն այդ ընտանիքին գաղթեցնել Տաշիր-Զորագետ[59]։ Կամ՝ Կ. Տեր-Մկրտչյանը ջանքեր է թափել ապացուցելու, որ Զաքարյանների նախնիները Բագրատունիներ են եղել, բայց չգիտես ինչու անպայման Հարավային Հայաստանից և անվերապահորեն հարավից հյուսիս տեղափոխված[60]։ Եվ, վերջապես, նույնիսկ Ա. Շահնազարյանցի պրպտումների և Զաքարյաններին, «քաղդեական» ծագում վերագրելու հիմքը ևս դարձյալ եղել է տոհմին անպայման «գաղթական» համարելու ձգտումը[61]։

Զաքարյանների էթնիկական ու սոցիալական ծագման խնդիրը արծարծելիս, ժամանակագրական հարցերի լուսաբանությունից բացի, անհրաժեշտ է անդրադառնալ իրադարձությունների ծավալման պատմաաշխարհագրական միջավայրին։ Եթե մենք նույնիսկ անվերապահորեն հավատանք հայ պատմիչների հաղորդումներին և Զաքարյանների նախնիներին հիրավի Տաշիր-Զորագետ գաղթած քրդեր համարենք, դարձյալ չենք կարող խուսափել մի շարք հարցերի պարզաբանումից, որոնց մասին խոսք կլինի ստորև։

Ինչպես տեսանք, Զաքարյանների տեղափոխության ժամանակ է դիտվում XI դարի կեսերից մինչև XII դարի սկիզբը ընկած, շուրջ վեց տաս-

---

57 Տե՛ս V. Minorsky. Studies in Caucasian History. London, 1953, p. 102.

58 Այս առումով հատկանշական է Հ. Մանանդյանի բնութագրումը. «Սրանք (Զաքարյանները—Հ. Մ.) գաղթել էին Զորագետ, ճավանորեն, XI դարում ...ընդունել էին այստեղ քրիստոնեության ըստ Հայոց եկեղեցու դավանանքի։ Նրանք, ազգակցություն հաստատելով ամուսնությունների միջոցով հայերի հետ՝ հետզհետե հայացել էին» (տե՛ս Հ. Մանանդյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1977, էջ 132, ընդգծումն իմն է—Հ. Մ.)։

59 Տե՛ս Ս. Երեմյան. նշվ. աշխ.։ Հեղինակին մտահոգություն չի պատճառել այն փաստը, որ Արծրունիները շարունակում էին լիովին հայ մնալ XI դարի 2-րդ կեսում ու հաջորդ դարերում, առանց քրդանալու կամ մահմեդականանալու։ Ինչ վերաբերում է Կորճայքի Կարթմնիք գավառին, որտեղի Արծրունիների «քրդացած» տոհմաճյուղի մասին դրում է գիտնականը, ապա այդքան վճռականորեն արտահայտված տեսակետի փաստական հիմքերը մեզ լիովին անհայտ են։

60 Տե՛ս Կ. Տեր-Մկրտչյան. նշվ. աշխ.։

61 Տե՛ս Ա. Շահնազարյանց. նշվ. աշխ.։

նամյակ ընդգրկող ժամանակաշրջանը։ Ինչպե՞ս է հնարավոր գնահատել այդ փուլը Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության պատմության համատեքստում, ի՞նչ ուղղվածություն ունեին ժամանակի էթնոդավանական ու լեզվական-մշակութային գործընթացները։

Առանց երկբայելու կարելի է պնդել, որ այդ տասնամյակները Կյուրիկյանների քաղաքական հզորության անկման տարիներն էին։ Հայտնի է, որ XI դարի վերջին քառորդում այդ թագավորությունը ենթարկվում էր սելջուկ-թյուրքերի, Վրաստանի ու Գանձակի Շադդադյանների ուժգնացող ճնշմանը։ 1118 թ. Վրաստանը գրավեց Լոռեն և Հյուսիսային Հայաստանի այս հատվածում քաղաքական գերիշխանությունը հայերից անցավ վրացիներին[62]։ Տաշիր-Զորագետում, էթնիկական պատկանելության փոփոխության համար, որը արտակարգ բարդ ու երկարատև գործընթաց է, անհրաժեշտ նախադրյալներ գոյություն չունեին նաև միատարր էթնիկական ու մշակութային միջավայրի առումով։ Կյուրիկյանների թագավորությունում, հատկապես 1065 թ., երբ Սամշվիլդեից Լոռե տեղափոխվեց մայրաքաղաքը, զգալի թիվ էին կազմում վրացիները։ Այդ տարածքում նկատելի ազդեցություն ուներ վրաց եկեղեցին։ Բավական է ասել, որ Դավիթ Անհողինի (989—1048) օրոք անգամ, Կյուրիկյանների առավել հզորության շրջանում, Գագ բերդի տեր Դիմիտրե մարզպանը «թողու զհաւատս հայրենի հայութեան և թիկունս օգնականի ղՎիրս արարեալ՝ ի նոցին կրկնամեռ լուանայ ջուր և զորգին իւր՝ մամփուղ Տաշրաց կացուցանէր ի Հիմնէ վանս»[63]։ Այսպիսով, Տաշիրում անգամ վրացական թեմ հիմնադրվեց, և վրաց եկեղեցու դիրքերը XI—XIII դարերում անընդհատ ամրապնդվում էին։ Այս դրույթի իրավացիության մասին են վկայում և՛ պատմողական աղբյուրները և՛ թե այդ դարերից հայտնի ու գերազանցապես Հյուսիսային Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունները[64]։ Հետևաբար, Տաշիր-Զորագետում էթնիկական ու դավանական միջավայրն այնպիսին չէր, որպեսզի հնարավոր լիներ անվերապահ հավատ ընծայել Վարդան Արևելցու՝ Զաքարյանների նախնիների «հայանալու» տեսությանը։

Առկա տվյալները բավարար են նաև Զաքարյանների դավանափոխության հավանականությունը կասկածի ենթարկելու համար։ Հայտնի է, որ XI դարի 40-ական թթ. սկսված սելջուկյան արշավանքները էական տեղաշարժեր առաջ բերեցին Մերձավոր Արևելքի քաղաքական, ինչպես նաև դավանական ու մշակութային կյանքում։ Հաճախակի դարձան կրոնափոխության ու եկվոր տիրակալների հետ խնամիանալու դեպքերը։ Ընդ որում, այդ երևույթներն ունեին միակողմանի ուղղվածություն։ Կրոնափոխության պարագայում քրիստոնյաներն է, որ մահմեդականություն էին ընդունում, իսկ խնամիական կապերի հիմքում ընկած էր մահմեդական տիրակալներին աղջիկ տալու օրեցօր արմատավորվող սովորությունը[65]։ Գաղտնիք չէ, որ երկու երևույթն էլ պայմանավորված էին տեղական ավատատերերի քաղաքական ու տնտեսական շահերով։ Այս առումով պերճախոս են անմիջականորեն Կյուրիկյաններին վերաբերող փաստերը։ 1064 թ. Ալփ-Արսլան սուլթանի հետ ամուսնացավ Կյուրիկյան արքայադուստրերից մեկը[66], իսկ չորս

62 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, էջ 471—473։ Ռ. Մաթևոսյան. նշվ. աշխ., էջ 90—102։ Հ. Մարգարյան. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 48—50։

63 Ասողիկ, էջ 257։

64 Տե՛ս Պ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 18—24, 63—64, 185—189։

65 Ինչպես նշում է Մխիթար Գոշը, հայ իշխանները «զդստերս իւրեանց յայլազգիս յամուսնութիւն տային»՝ վերջիններից ռազմական օգնություն ստանալու ակնկալիքով (տե՛ս Ղ. Ալիշան. Հայապատում. հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 387)։

66 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 145։ Քարթլիս ցխովրեբա, հ. 1, էջ 307։

տարի անց հայրենի հավատը ուրացավ Կյուրիկյանների տոհմի Կախեթի ճյուղից Աղսարթանը։ Երբ 1068 թ. սելջուկները հերթական անգամ ներխուժեցին Անդրկովկաս, Աղսարթանը, որը հայրական գծով Դավիթ Անհողինի թոռն էր, իր տիրույթները պահպանելու համար միացավ նրանց և մահմեդականություն ընդունեց[67]։ Հետևաբար, իրական փաստերը ցույց են տալիս, որ դժվար է խոսել Զաքարյանների նախնիների կրոնափոխության և հայադավան դառնալու մասին հենց այն ժամանակաշրջանում, երբ հակառակ ուղղվածության գործընթացներ էին տեղի ունենում։

Էթնոկրոնական գործընթացների մասին խոսելիս չպետք է աչքաթող անել մասնակից էթնոսների առանձնահատկությունների պարագան։ Առայժմ խոսքը վերաբերում էր հայ էթնոսին, Տաշիր-Զորագետում նրա ունեցած դիրքերին ու հարևան ժողովուրդների հետ փոխազդեցություններին։ Իսկ հիմա Հայաստանում քրդերի առկայության ու էթնիկական ինքնատիպության մասին։ Քաջահայտ է, որ քրդական տոհմերից IX—XI դարերում Հարավային Հայաստանում ազդեցիկ դիրքեր ունեին Մրվանյանները, XII դարի վերջում—XIII դարի սկզբում՝ Այուբյանները, իսկ Հյուսիսային Հայաստանում X—XII դարերում՝ Շադդադյանները։ Վերջիններս իշխում էին Դվինում և Կյուրիկյանների անմիջական հարևանությամբ գտնվող Անիում։ Ինչպես ցույց է տալիս վրացական աղբյուրներում պահպանված «Քուրդվաճառ» տեղանունը[68], հնարավոր է, որ քրդական էթնիկ հատված էր ապրում նաև Կյուրիկյաններին պատկանող Դեբեդ-Զորագետի հովտում։ Զգալի թվով քրդեր էին ապրում, ընդ որում X դարից ոչ ուշ, նաև Անդրկովկասի տարբեր մասերում, մասնավորապես Դվինում, Արաքսի ափին, Առանում, Դերբենդում[69]։ Այսպիսով, քրդական տարրը Հայաստանի որևէ մասում մեկուսացած չինել չէր կարող, քանի որ այն առկա էր երկրի տարբեր հատվածներում, այդ թվում Տաշիր-Զորագետում ու նրա մատույցներում։ Բացի այդ, այն երբեմն քաղաքականապես ավելի հզոր էր ու կազմակերպված, քան բուն հայկական բնակչությունը։ Հայոց միջավայրում քրդերը դիտվում էին մահմեդականության նվիրյալ կրողներ և այդպիսով ավելի էր ընդգծվում նրանց «օտար» լինելը։

Զաքարյանների նախնիների հայացման հավանականության հարցը բազմակողմանիորեն քննարկելիս անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել քրդական էթնոսի ինքնատիպության վրա։ Հանրահայտ է այն հսկայական դերը, որ քրդական հասարակության կյանքում դարերի ընթացքում խաղացել են ցեղային կազմակերպությունը, ինչպես նաև առանձնահատուկ տնտեսավարությունը։ Այդ էթնիկական յուրահատկությունները օտար միջավայրում հույժ կարևոր էթնոպահպանիչ գործոնի դեր են կատարել։ Թե որքան ազդեցիկ են եղել ցեղից չառանձնանալու և ռազմական գործով զբաղվելու ավանդույթները, համոզիչ կերպով ցույց է տալիս Շադդադյանների օրինակը, որի ոդիսականը Հայաստանում՝ հիանալի պատմական զուգահեռ կարող է ծառայել, եթե քրդական ազդեցիկ ընտանիքի հետագա ճակատագիրը տեսականորեն կերպաձևելու (մոդելավորելու) փորձ ձեռնարկենք։

Շադդադյանները, ինչպես որ Զաքարյանների նախնիների մասին է ասվում, Հայաստան էին տեղափոխվել ու ծառայության անցել հայ տիրակալի մոտ։ Ըստ արաբական ու հայկական միմյանց լիովին համաձայն ու փոխադարձաբար լրացնող տեղեկությունների, առաջին Շադդադյաններից Լաշքարին 955—965 թթ. գտնվում էր Դիրզուրի (Վայոց Ձոր) հայ իշխանի

---

67 Տե՛ս Քարթլիս ցխովրեբա, հ. 1, էջ 309։ Садр ад-Дин ал-Хусайни. Ахбар ад-даулат ас-Селджукийа. М., 1980, с. 54—55:

68 Տե՛ս Քարթլիս ցխովրեբա, հ. 2, էջ 50—51։

69 Տե՛ս The Encyclopaedia of Islam. Vol. V, Leiden, 1981, p. 450.

բանակում[70]։ Ավելի վաղ, երբ անհաջողության էր մատնվել Դվինին տիրելու նրա հոր փորձը, Լաշքարին ու եղբայրները որոշ ժամանակ ապրել էին Վասպուրականի Արծրունիների մոտ։ Այսպիսով, Լաշքարին երկար տարիներ էր անցկացրել հայկական միջավայրում, բայց փաստ է, որ նա չէր փոխել ո՛չ դավանանքը, ո՛չ էթնիկական պատկանելությունը։ Դեպքերին ժամանակակից արաբ հեղինակի խոսուն վկայությունները օգնում են պարզելու էթնիկական ինքնագիտակցության չխամրելու պատճառները։ Հարցն այն է, որ Շադդադյանները չէին խղել իրենց կապերը ցեղակիցների հետ։ Ըստ պատմիչի, Լաշքարիի հայրը 951 թ. սկսեց իշխել Դվինում «իր ընտանիքի, տոհմի և հետևորդների փոքր խմբի հետ»։ 954 թ. նա «միացավ իր ընտանիքին, որդիներին ու տոհմին» Վասպուրականում, իսկ Լաշքարիի «իշխանության տևողությունը միայն իր ցեղի վրա 24 տարի էր, իսկ իր ցեղի և Գանձակ քաղաքի ու նրա բոլոր գավառների վրա՝ 8 տարի»[71]։ Եթե նկատի ունենանք, որ վերոհիշյալ 24 տարիների մեջ են մտնում նաև հայ իշխանի մոտ անցկացրած տարիները, ապա պարզ է դառնում, որ ցեղակիցների խումբը մշտապես ուղեկցում էր իր ղեկավարին, Շադդադյանները անքակտելի միասնություն էին կազմում սեփական ցեղային միավորման հետ։ Այն, լինելով ռազմիկների կազմակերպություն, հակադրվում էր տեղական նստակյաց հողագործ բնակչությանը։ Իրավիճակը բնութագրելու տեսանկյունից հատկանշական են այն խոսքերը, որոնցով, ըստ արաբ հեղինակի, Լաշքարիին դիմեց կրտսեր եղբայրը, երբ համոզում էր թողնել հայ իշխանի մոտ ծառայությունը. «Ով իմ ամիրա եղբայրս, արդյոք ժամանակը չի՞ եկել, որ դու հրաժարվես հողագործ անհավատների ծառայությունից և առավոտ երեկո խոզերի հետ անցկացնելուց ու ազանի փոխարեն զանգերի ձայնը լսելուց»[72]։ Այսպիսով, ինչպես երևում է X դարի կեսերից մինչև XII դարի դարի վերջը Դվինում ու Անիում իշխող Շադդադյանների օրինակից, քրդական ընտանիքը լիովին ի վիճակի էր նույնիսկ այդքան երկար ժամանակաշրջանում հաջողությամբ դիմադրավելու հայկական միջավայրի ազդեցությունը։

Վերադառնալով Զաքարյանների նախնիներին, վերոտին անդրադառնանք «Բաբիրական խել» արտահայտությանը և այն քրդական ցեղանուն ընկալելու փորձերին։ Զաքարյաններին կոնկրետ քրդական ցեղից սերելիս, թվում է, դժվարություն չպետք է ծագեր, քանի որ քրդական ցեղանունները լավ են պահպանվել, դրանք վաղուց ցուցակագրված և բավականաչափ սպառիչ կերպով ուսումնասիրված են։ Ուստի «Բաբիրական խել»-ի ու քրդական պատմական կամ ներկա ցեղի նույնացումը պետք է դյուրին լիներ։ Սակայն այդ խնդիրը դժվարություններ է պատճառել անգամ այնպիսի հեղինակության, ինչպիսին ականավոր քրդագետ, արևելագետ Վ. Մինորսկին էր։ Ի հաստատումն Զաքարյանների քրդական ծագման ավանդության, գիտնականը բերում է «Bapiran» անվան՝ քրդերի մեջ տարածված լինելու փաստը, իսկ այնուհետև ավելացնում է, որ «Piran» ցեղախումբ (clan) գոյություն ունի Մանդուր ցեղային միության կազմում[73]։ Բավականաչափ համոզի՞չ են, արդյոք, մատնացուցված իրողությունները։ Նախ՝ «Բափիրան»-ը ցեղանուն չէ, այլ ընդամենը անձնանուն, այն էլ ոչ նույնական «Բաբիրական»-ին։ Այնուհետև, եթե Վ. Մինորսկին «Բափիր» անվանումից հետո աննկատե-

---

[70] Տե՛ս V. Minorsky. Op. cit., p. 12, Ա. Տեր-Ղևոնդյան. Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին.—«Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 478, հմմտ. Վարդան Արևելցի, էջ 134։

[71] Տե՛ս V. Minorsky. Op. cit., p. 8—16. Ա. Տեր-Ղևոնդյան. նշվ. աշխ., էջ 476—480։

[72] Տե՛ս V. Minorsky. Op. cit., p. 14. Ա. Տեր-Ղևոնդյան. նշվ. աշխ., էջ 479։

[73] Տե՛ս V. Minorsky. Op. cit., p. 102.

լիորեն չանցներ «Փիրան»-ին, ապա «Բաբիրական»-ի «Փիրան» զուգահեռը շատ ավելի անհամողիչ կարող էր թվալ։ Շարունակելով Վ. Մինորսկու տեսակետի քննությունը, դժվար չէ նկատել ևս մեկ անհարիրություն։ Զաքարյանների նախնիներին համարելով «Միջագետքցի քրդեր», նա միևնույն էջում «Բաբիրական խելջ»-ի նախահիմք է համարում Փիրան ցեղախումբը, որը, ինչպես հայանի է, գտնվում է Իրանական Քրդստանում[74]։

Դժվար է Վ. Մինորսկու հետ համաձայնել նաև «Բաբիրական խելջ» արտահայտության երկրորդ բաղադրիչի թարգմանության հարցում։ «Խելջ» քրդերեն բառի իմաստի արտահայտումը «tribe» բառով, որոշակի իմաստային խտոնաշփոթ կարող է առաջ բերել։ Որքան էլ դժվար է քրդական հասարակությանը բնորոշ ինքնատիպ հասկացությունների հաղորդումը այլ լեզուներով, այնուամենայնիվ կասկածի ենթակա չէ հետևյալը։ Սովորաբար, քրդական ցեղը՝ «աշիրա»-ն կազմված է որոշակի թվով «թիրա»-ներից կամ «թայֆա»-ներից, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, բաժանվում են բազմաթիվ «խելջ»-երի։ Վերջիններից ամեն մեկը բաղկացած է 20—30 վրանից կամ տնտեսությունից, որոնք միավորված են ինչպես տնտեսական, այնպես էլ ընտանեկան կապերով[75]։ Ուրեմն «խելջ»-ը քրդական հասարակության կառուցվածքում ամենափոքր միավորումն է և անհնար է այն ցեղ համարել։ Ստացվում է, որ «Բաբիրական խելջ»-ը ցեղային ստորաբաժանման անվանում ընկալելու պարագայում բախվում ենք խիստ անհավանական իրավիճակի հետ։ Հայ պատմիչները սխալ և խառնաշփոթ են ներկայացնում Զաքարյանների նախնիների տոհմածառը, հստակ չեն պատկերացնում նրանց Հայաստան տեղափոխվելու ժամանակահատվածը, բայց առեղծվածային ճշգրտություն են ցուցաբերում տոհմի նախնիների տնտեսական-ընտանեկան ամենասկզբնական ընդհանրության մատնացուցման հարցում։ Հնարավո՞ր է, արդյոք, այդ հստակատեսությունը բացատրել Զաքարյանների ընտանեկան ավանդություններով։ Այս հարցին ակնհայտորեն բացասական պատասխան է սպասում։ Եթե XIII դարի 60-ական թթ., այսինքն՝ ընդամենը մեկ դար հետո, Զաքարյանների սերունդները անկարող էին ճիշտ հիշել իրենց ամենանշանավոր նախնու՝ Սարգիս Մեծի, հոր ու պապի անունները, ապա ինչպե՞ս էին նրանք անսխալ մատնանշելու իրենց հեռավոր նախնիների ոչ թե ցեղի կամ «թիրա-թայֆա»-ի, այլ ուղղակի «խելջ»-ի անունը։ «Խելջ» բառի միակ վկայությունը բովանդակ հայ մատենագրության մեջ, թվում է, բավականաչափ հստակորեն ցույց է տալիս, որ գործ ունենք հեռինակային ինքնատիպության դրսևորման հետ։ Ցանկանալով ընդգծել Զաքարյանների քրդական արմատները՝ Կիրակոս Գանձակեցին, ամենայն հավանականությամբ, գիտակցաբար է դիմել «խելջ» բառին։ Փոխարենը այդ հասկացությունը դժվարացել է ըմբռնել անդամ նրա դասընկեր Վարդան Արևելցին, որն ուղղակի բաց է թողել «Բաբիրական խելջ» արտահայտությունը։ Ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու հաղորդումը վերաշարադրող Զաքարիա Սարկավագին, ապա նա, ելնելով ավանդության կառուցվածքից ու սյուժեի տրամաբանությունից, «խելջ» բառն ըմբռնել է «երկիր, կողմ» առումով։

Ավարտելով քննությունը, կարելի է արձանագրել հետևյալը։ Զաքարյանների ծագման չորս վարկածներից և ոչ մեկը իրողությունների համաժամանակյա, հավաստի ու անաչառ հավաստագրում չէ։ Խիստ ակներև են այդ տեսությունների քաղաքական միտումներն ու գաղափարախոսական-մատենագրական ակունքները։ Ուսումնասիրողներին մնում է եզրակացություններ-

---

[74] Տե՛ս Encyclopaedia Iranica. Vol. III, London and New-York, 1989. p. 234; А. М. Ментешашвили. Курды. М., 1984, с. 82:

[75] Տե՛ս The Encyclopaedia of Islam. Vol. V, p. 470—471; А. М. Ментешашвили, Указ. соч., с. 72—73.

ի հանգել աներկրայելիորեն ստույգ փաստերի հիման վրա, ձերբազատվելով միջնադարյան ավանդությունների ազդեցությունից։

XII դարում, երբ Զաքարյանների տոհմը առաջին անգամ ազդեցիկ դեր սկսեց խաղալ Հայաստանի ու Վրաստանի քաղաքական կյանքում, այն ուներ շեշտված հայկական դիմագիծ (անձնանուններ, միաբնակություն, խնամիական կապեր և այլն)։ Բացի այդ, ընտանիքի անդամները ժամանակակիցների աչքում համարվում էին հայ պետականությունը շարունակողներ՝ իշխաններ «հաց ազգատոհմիս»[76], ինչպես նաև հայոց եկեղեցու հովանավորներ։ Ժամանակակիցներից մեկի բնորոշմամբ, «յետ տարաժամ փոխելոյն առ Քրիստոս մեծին Զաքարիայի, որ և խաւար գործեաց աշխարհիս Հա[յ]ոց, բարենշան նորին շառաւեղն պա[յ]ազատն եւ մնացորդն ազգիս ... լուսաւորեալ փաբատեաց զմառախղապատ խաւարն, զոր ի զրկմանէ հաւր նորա մածեալ ունէր զեկեղեցիս Հայաստանեաց»[77]։ Հակառակ Իվանեի քաղկեդոնական լինելու պարագային, որպես հայոց եկեղեցու պաշտպաններ երկու եղբայրներին էր դիմում Մխիթար Գոշը[78]։ Ոչ պակաս կարևոր են այն վկայությունները, որոնք, Զաքարյանների դավանական առումով հայությունից զատ, շեշտում են նրանց էթնիկապես հայ լինելը։ «Իշխանք երկու հայասեռք՝ եղբարք միմեանց»՝ այսպես է բնութագրում Զաքարե II-ին և Իվանե I-ին 1204 թ. Հռոմկլայում գրված ձեռագրի գրիչը[79]։ Փառապանծ եղբայրների մասին խոսելիս նույն հանգամանքի վրա սևեռուն ուշադրություն է հրավիրում նաև Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությանը կից տարեգրական բնույթի երկի հեղինակը՝ «որ էին ազգաւ Հայք»[80]։ Ավելի կարևոր ենք համարում ականավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությունները։ Նա հետևյալն է գրում XII դարի վերջի Զաքարյանների մասին. «Բայց յետ վախճանին Գէորգի թագաւորին Թամարն մեծարեալ զորդիսն Սարգսի՝ որդւոյ Զաքարէի իշխանի, հայ ազգաւ և ուղղափառ հաւատով, զՁաքարե և զԻւանէ, և բարձրացուցանէ ի պատիւ»[81]։ Ինչպես կարելի է համոզվել, ընդգծված արտահայտությամբ միջնադարյան հեղինակը հստակորեն սահմանազատում է էթնիկական ու դավանական պատկանելությունը և շեշտում երկու առումով էլ Զաքարյանների լիարժեք հայությունը։ Այսպիսով, Զաքարյանների մեզ ծանոթ առաջին սերունդների էթնոմշակութային նկարագիրը, ինչպես նաև անմիջական ժամանակակիցների ուղղակի ցուցումները տոհմի հայկական ծագումը և պատկանելությունը կասկածի ենթարկելու որևէ հիմք չեն ընձեռում։

Ուսումնասիրության ներկա փուլում առկա փաստերից կարելի է Զաքարյանների սոցիալական ծագման մասին անել հետևյալ հավանական եզրակացությունը։ Տոհմի տարեգրությունից երևում է, որ մինչև 1176—1177 թթ.՝ Օրբելիների գլխավորած ապստամբությունը, որից հետո միայն սկսվեց Զաքարյանների գլխապտույտ բարձրացումը, Սարգիս II Մեծի տոհմաճյուղը

---

78 Տե՛ս Դիվան հայ փիլիսոփայության, I, էջ 14։

77 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 178։

78 Տե՛ս «Արարատ», 1900, էջ 497։

79 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 89։

80 Տե՛ս Միխայել Ասորի. Ժամանակագրություն. Երուսաղեմ, 1870, էջ 526։

81 Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական. Մոսկվա, 1861, էջ 287։ Նախադասության կառուցվածքն այնպիսին է, որ դժվար է ասել, թե Զաքարյանների հիշատակված երեք սերնդից որի՞ն են վերաբերում ընդգծված բառերը։ Ամենից հավանականն այն է, որ այդ բնութագրմամբ պատմիչը վերադառնում է նախադասության սկզբին և դարձյալ խոսում է Սարգիս II-ի որդիների մասին։ Մյուս կողմից, դժվար է ենթադրել, որ դավանական հարցերում անչափ զգայուն հեղինակը կարող էր մոռացության մատնել Իվանե I-ի դավանափոխությունը։ Ուստի, կարծում ենք, բնութագրումը վերաբերում է տոհմի երեք սերունդին էլ հավասարապես։

պատկանել է ավատատերերի միջին շերտի վերնախավին։ Ընդ որում, եթե Սարգիս Մեծը նկատելի դեմք էր Հյուսիսային Հայաստանում և Վրաստանում դեռևս XII դարի 60-ական թթ., ու կարող էր «իշխան» համարվել[82], ապա նրա եղբայր Վահրամի սերունդները շարունակում էին սովորական «աղնատուր,—«աղատա» ճանաչվել նույնիսկ այդ հարյուրամյակի 90-ական թթ. սկզբին[83]։ Տոհմի հնագույն և փայլուն ծագման առաջին դրույթները կարող էին ի հայտ դալ միայն XII դարի վերջին տասնամյակում—XIII դարի սկզբում, երբ Սարգիս Մեծի որդիները բարձր դիրք էին ձեռք բերել վրաց արքունիքում։ Այդ ժամանակաշրջանում էլ պետք է սկիզբ առներ տոհմի անցյալը շրջանցելու ձգտումը, որն արտացոլված է, օրինակ, Թամար թագուհու երկրորդ պատմիչի երկում։ Նա, խոսելով Զաքարե II-ի և Իվանե I-ի բարձրացման մասին դրում է. «Տոհմով հավատարիմ արքաներին, այդ պատճառով էլ մեծապես սիրված հենց Թամարի պապերից և հայրերից»[84], այսինքն շեշտում է Զաքարյանների կապերը անմիջականորեն վրաց թագավորների հետ։ Պատմիչի պնդման միտումնավորությունը ակնհայտ է։ Ինչպե՞ս է հնարավոր խոսել Գեորգի III-ի, Թամարի հոր դեմ ուղղված խոշոր ապստամբության մասնակիցների տոհմական հավատարմության մասին։ Կամ՝ ինչպե՞ս կարող էր Սարգիս II-ը, «Օրբելիների եղբայրը և սիրելին»[85], շրջանցել իր ամենազոր «պատրոն»-ին և, խախտելով ավատատիրական ենթակարգությունը, կապեր հաստատել Վրաստանի թագավորի հետ։ Ընտանիքի դիրքերը ավելի համեստ պետք է լինեին XII դարի սկզբին, երբ Զաքարյանները տիրում էին գավառական խոժոռնի ամրոցին[86]։ Հետևաբար, սոցիալական ծագմամբ Զաքարյանները հասարակ հայ ազնվականներ էին, նախ Կյուրիկյանների, ապա Օրբելիների ստորականները։

ПРОИСХОЖДЕНИЕ ЗАКАРЯНОВ

А. Г. МАРГАРЯН

Резюме

В средневековых источниках происхождение знаменитого княжеского рода Закарянов (XII—XIV вв.) представлено четырьмя версиями. Источниковедческий анализ показывает (см. «Историко-филологический журнал», 1992, № 2—3), что первая—приписывающая Закарянам курдское происхождение, была сконструирована по моделям Мовсеса Хоренаци. Продолжая историографическую традицию, армянские авторы наделяли Закарянов «иностранным», «древним» и «высоким» происхождением. Аналогичных идеологических принципов придерживался также грузинский автор, первый историк царицы Тамар. По его мнению, Закаряны—потомки Ахеменидского царя Артаксеркса I Долгорукого. Остальные две версии, связывающие Закарянов с армянскими царскими династиями Багратуни и Арцруни, выдвинуты самими Закарянами и носят отпечаток их политических программ и притязаний. Комплексный анализ политических, этно-конфессиональных и языково-культурных реалий показывает, что теория о переселении предков Закарянов в армянское царство Кюрикянов во второй половине XI—в начале XII вв. не выдерживает критики. Есть все основания полагать, что Закаряны XI—XII веков этнически были армянами (*հայասեռ, հայ ազգաւ*), а в социальном отношении—обычными «азатами»—«азнаурами», вассалами сперва Кюрикянов, а затем—князей Орбели.

---

82 Վարդան Արևելցի, էջ 166։ Ստեփանոս Օրբելյանը «իշխան» է կոչում նաև Զաքարե I-ին (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 287), բայց դժվար է պնդել, թե այդ բնութագրումը ճշգրիտ է։

83 Տե՛ս Քարթլիս ցխովրեբա, հ. 2, էջ 51։

84 Տե՛ս նույն տեղում, էջ 123։

85 Տե՛ս նույն տեղում, էջ 19։

86 Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 181։